



59. ՈՒՇԱՔԸ

Մի մարթ ու կնիկ էրկու ախշիկ են ունենում, մի տղա: Մի ախշիկը քորփա ա ըլում, դեռ հլա ըրորոցումը, ծծկեր ա ըլում: Դրանք խմոր են ունցում, մերը փուռը վառում ա, գալիս ա խմորը գնդում: Եղնա գնում են փուռը սրփելու:

Մերը փուռը սրփում ա, պրծնում, վենձ ախշկանն ասում ա.— Ախշի՛, ախշի՛, գնա գունդը բի, հացը թխենք:

Ախշիկը գնում ա, եդ գալի մորն ասում ա.— Նանի, գունդ չկա: Ասում ա.— Կրակի գաս դո՛ւ, էս հաղաղ խմորը գնդեցի, ո՞նց թե գունդ չկա:

Ասում ա.— Հլա դե արի տես, խու ես խա՞փում չեմ:

Մերը գնում ա.— Վո՛ւյ, դրուստ որ գունդ չկա:

էն ըրորոցի կրակի էկածը դրուստ որ չիմ կերած ա ըլում: Նա կրակ ուտե, օրն օրի վրա վենձանում ա: Մի քիչ որ ման գալու ա անում հա, մոր ծիծն ուտելիս վեր ա դնում ու մորն ուտում: Քիրը տուն ա գալիս թե չէ՝ նրան էլ ա ուտում: Ախպերն ուրիշ տեղ ա գնացած ըլում:

Ըրիգունը գործի տեղից հերը տուն ա գալիս թե չէ, նրան էլ ա վեր տնում— ուտում: Ախպերն ուրիշ տեղից գալիս ա հասնում գեղի ղրաղը թե չէ, խալխերը խարար են տալիս.— Սհե, սհե:

Ըտի ախպերն ասում ա.— Ես էս գեղումն էլ կենալ չեմ: Գլուխն առնում ա, մի ըշխարի վրա գնում:

Գնում ա, գնում ա, շատն ու քիչն ինքը գիգե, գնում ա ու մի վերու ծմակում տենում, որ մի եթթաղ ա շինած: էդ եթթաղումը մի քոռ մարթ բերում ա ոչխարնին տուն անելիս շեմքումը կադնում ա, հատ-հատ շեմքովն անց կացնում, հմբարում, տուն անում, գուռը փազում: Եղնա գնում ա կրակ անում, խմոր ունցում, կրկենի թխում, ուտում: էդ տղեն էլ գնում ա նրա կշտին նստում, հմա խոսում չի, կրկենուց ինքն էլ անսաս կտրում ա, ուտում:

էն մարթը որ տենում ա կրկենին թեղ հատավ հա, բրմանում ա, ասում ա.— Ո՞վ ես ըտի, թե տղա ես՝ խոսի, իմ տղեն ես, թե ախչիկ ես՝ խոսի, իմ ախչիկն ես, թե մարթ ես՝ էլի խոսի, իմ հընդերն ես:

էնա տղեն խոսում ա:

Ասում ա.— Դե իմ տղեն ես:

էլ եդ կրկենի ա թխում, որ բռավողն ուտեն:

Հռավողը եդ հցավորվում են, տղեն ոչխարնին տանում ա բրածացնելու, հլիվորը տանը մնում ա:

Հմա հլիվորն էն տղին իրեք ճամփա ա շհանց տալի, էրկուսի հմար ասում ա.— Դենը տար, դենը տար: էն մնի հմար ասում ա.— Դենը տանիս ոչ, իմ օտկունն ընդի յա դիրել:

էն էլ էն էրկու ճամփովը տանում ա, էն մնովը տանում չի: Մի օր, էրկու օր, մխելի տհենց անց ա կենում, մի օր էլ ասում ա.— Հլա դենը տիմ տանիլ, տենամ էն ի՞նչ կա ընդի, որ հլիվորը թողուց ոչ դենը տանելու:

էնա տանում ա, տենում ա ստանեքեր են:

Հլե բրան տենում են թե չէ, ասում են.— Ախպեր ջան, ըստի արի, ըստի արի:

Կանչում են ու իրանք պար են դալի: Գնում ա:

Ստանեքերից մինն իրա քվորն ասում ա.— Գնա քլիաթինը բի:

Հտի դա գլխի ա ըլում: Քլիաթինն ընդի ա ըլում դրած, չկել ստանի հասնիլը— ինքը վիր ա ունում, քլիաթնով էն մի ստանին ճմրթում ա, նղավացնում: Ասում են.— Խի՞ տհենց արի:

Ասում ա.— Բա քլաթինն ուզում ա որե աչկերս հանե՞: Իմ հոր աչկերը քոռացրել եք, հմի էլ ուղում եօ իմը քոռացնե՞ք: էկեք թհգ իմ հոր աչկերը սղացրեք:

Ասում են.— Դուզ ա, մենք ենք քոռացրել, դու որ տհե լավ տղա ես, առ՝ քու հոր աչկերն էլ, էս դեղն էլ. տար քու հոր աչկերը տեղը դիր, էս դեղն էլ քսե, կսաղանա:

էդ տղեն եդ ա դալի, ասում ա.— Հայրիկ ջան, բա ինձ թողեիր ոչ դենը գնամ, բա խի՞ չի ինձ էլ բան արին:

Ասըմ ա.— Բալա ջա՛ն, դենը գնալ մի, իմ աչկերը քոռացրին, քունն էլ կքոռացնեն:

Ասըմ ա.— Ես նրանցից եմ ուստա, կարալ շեն:

էնա աչկերը տեղն ա դնըմ, դեղը քսըմ, սղացնըմ ա:

Օրի մի օրն ասըմ ա.— Հայրիկ ջան, կարալ շե՞ս ինձ ըղու անես, դնամ իմ հայրենիքը, իմ վաթանը տեսութին, ն՛ն թողել եմ էկել:

Ասըմ ա.— Խի՞ շեմ կարալ:

էնա մի ձի ա սարքըմ, ոչխարի կաթով էլ կրկենի ա թխըմ. խուրջինը լքցնըմ, ձիուն նստացնըմ ա, ճամփու դնըմ:

էդ տղեն գնըմ ա տենըմ, որ իրանց գեղի շփլթուն կտրել ա: Էն կրակի էկած իրան ոչ բարով քիրը շիմնուն էլ կերած ա ըլըմ. Մենակ մի որցակ ա ըլըմ թողած, որ կանչե, ինքը ձենիցը վի կենա, մին էլ մի դարփին ա թողած ըլըմ, որ ըտամնին սրիլ տա:

Գնըմ ա իրանց դուռը հասնըմ թե չէ, քիրը տանիցը դուս ա գալի, ասըմ ա.— Վա՛յ ախպեր ջան, բարով, բարով: Գալիս ա: Կթաթորվըմ, եղնա խուրջինը վի ա ունըմ, տանըմ ա տուն:

Տանը մի սհաթումը կուլ ա տալի խուրջինը, դուս ա գալի, ասըմ ա.— Ախպեր ջան, բա դարդակ ես էկե՞լ:

Նա էլ վախըմ ա թե ասե. «Բա խուրջինն ի՞նչ արիք»: Ասըմ ա.— Հա, դարդակ եմ էկել:

Ձին ախպոր ձեռիցն առնըմ ա, տանըմ ա հորըքելու: Տանըմ ա տալըմն էրկու ոտն էլ կուլ տալի, գալիս ասըմ.— Վա՛յ, ախպեր ջան, բա ձիդ էրկու ոտնանի ա:

Եդ ասըմ ա.— Հա՛:

Հմի էլ եդ գնըմ ա էն էրկու ոտն էլ ուտըմ, գալիս ա ասըմ.— Վա՛յ, ախպեր ջան, ձիդ առանց ոտն ա:

Հմի էլ եդ ա գնըմ, ձիու ջամդաքն ուտըմ, գալիս ա ասըմ.— Վա՛յ, ախպեր ջան, բա ոտով ես էկե՞լ:

Ըտամնին փունջ ա ըլըմ, գնըմ ա դարփնին սրիլ տալու, ախպորը տանը թողըմ ա, որ գա եղնա ուտե:

Դուս ա ըլըմ թե չէ՝ մկենբը լիզու են ըլըմ, աւըմ են.— Նաչար տղա, ջահել կյանքդ հանգցնիլ տի, գնա, փախի որե, վնաց ըտամնին սրիլ տալու, գալ տի քի էլ ուտիլ:

Եղնա էդ մկենբը բերըմ են դրան մի սանդրը տալիս, մի շուշա լիքն աղ, մին էլ էրկու մոմ, ասըմ են.— Նա գալ տի քի եղնա հասնիլ, որ տենաս հասնըմ ա հա, էս սանդրը վրա արա, դալին ծմակ ու մոշուտ կդառնա, աղաքը կփադի, դու կփախչիս: Որ տենաս ծմակն անց կացավ հա, եդ ուզըմ ա քի հասնի, շուշեն լիքը

աղը վրա արա՝ շուշեն սուր ածլքեր կդառնա, ոտները կկտրատե, աղն էլ կտրածնին կդառնա՝ կմխկտացնե, կարալ չի քի հասնի: Որ տենաս եդ հասնում ա, ընդով էս մոմերը վեր գծե, նրանք չինարի կդառնան, վեր կլիս վրեն, էլ կարալ չի ուտե:

էդ տղեն տվածնին վեր ա ունում, փախչում: Ուշաբ քիրը գալիս ա տէնում, ու տանը չի: Կուանում ա թախտի տակը մտիկ անում, մկները օջորքիցը ծվծվում են: Դրա օջորքն ա մտիկ անում թե չէ, նրանք ֆող են ածում դրա աչկերը, որ դա մլու անե, շկելը նա մի քիչ էլա հեռանա: Եդ աչկերը թամզում ա, գնում ա եղնեն հասնելու ա ըլում, էն սանդրը վրա ա անում: Սանդրը դրա ըղաբին ծմակ ա դառնում, փշոտ թփեր են դառնում, մասրքերը, փշերը բռնում են, հմա եդ ճպուսպորելով անց ա կենում: Գալիս ա եդ հասնելու ա անում, հմի էլ էն աղովը լիքը շուշեն ա վրա անում: Դրանց էլ չի մտիկ անում ածլքերը ոտները կտրատում են, աղը նի յա դառնում մղմղորիկը գծում, հմա եդ արինը շաղ տալով գնում ա: Մին էլ էնա հա իրան հորացրվի եթթաղին հասնելիս ա ըլում, տենում ա հրես էնա հա հասնում ա: Դա մոմերը վեր ա գծում, էրկուսն իրար յանաշու շինարքերը են դուս գալի, վեր ա ըլում դրանց մնի վրա: Ուշար քիրը գալիս ա ծառի որքն ըռխով, ըտամնով կրծում, պուկում ա: Տղեն տենում ա պուկեց, հմի էլ էն մնին ա վեր ըլում: Հմի էլ էն մինն ա կրծում: Տենում ա պուկիլ տի, էն իրան հորացրվի շնեթին ձեն ա տալի:

Դրանք էրկու վենձ, դոմփար շներ են ըլում, ասում ա.— Հասար ու Բասար, Հասար ու Բասար, էկե՞ք հասե՞ք, հենց կուլ տվեք, որ մի կաթիլ արին շմնա:

Հլե մին էլ տենում ա, որ Հասարն ու Բասարը գալիս են: Գալիս են ամենքը մի կոնում ըռխում, ծվատորում, քրքրում, հենց կուլ են դծում, որ արին շեն թողում գեղնին մնա (վա՛յ տամ նրա գլուխը):

Եղնա գնում ա իրա հորացրվի կուշտը, ասում ա.— Սհե՛, սհե՛:

Հերս.ցուն գալիս ա դրան փթաթորվում, ասում ա.— Բալա ջան, էլ ըշխարումը դարդ շունիմ, ես էլ էի էդ ուշաբիցը փախել, էկել էս վերունի շողմը ջոգ կենեի, հմա ըստի էլ ստանըքերը չի թողեին դաթար մնամ, աչկերս էլ հանեցին, հմա դուն էկար նրանց դիվանն արիր: Հմի էլ գնացիր էդ ուշաբին վերջ տվիր, աշխարը հլալեցիր: Հմի կարանք մենք արխեին ապրինք:

Ասում ա, քոչ ու բրխանեն բարցում են ձիանու վրա, ոչխարն աղաք անում՝ դբա իրանց գեղը: Գնում են մի լավ տուն ու տեղ են շինում, էդ տղի հմար ուրիշ գեղից մի լավ ախշիկ են ուզում, հըրսանիք անում, նոր պրծնիս ամեն ցավից ու շոռից, ինչ պրծնում են: